

«ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Տ Ն Օ Ր Ե Ն

Հ Ր Ա Մ Ա Ն 304

**ՀՀ ԱՆ «ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ՏԱՐԱԾՔՈՒՄ ԴԻՄԱԿՆԵՐ ԵՎ ԶԵՌՆՈՑՆԵՐ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԵԼՈՒ
ԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«27» մայիսի 2020թ.

ք. ԵՐԵՎԱՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ հոդվածի 4-րդ կետերով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշման, Պարետի՝ 2020 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների վերաբերյալ» N 63 որոշման մեջ կատարված լրացումները և փոփոխությունները, ինչպես նաև «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի Կանոնադրության 8.11-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերը.

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ ԵՄ

Սահմանել, որ

1. ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ ներքին բաց (բակային տարածքներ, կիսաբաց միջանցքներ) և փակ տարածքներում (շենքերի ներսում գտնվող միջանցքներ, բոլոր տեսակի սենյակներ), տարածք մուտք գործելու թույլատվություն ունեցող անձնական օգտագործման մարդատար միջոցներում, ծառայողական ավտոբուսում՝ անկախ գտնվելու վայրից, շտապ օգնության մեքենայում, պարտադիր է դիմակ կրելը՝ սահմանված հիգիենիկ կանոններին համապատասխան:
2. Բոլոր աշխատակիցներն իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս բուժական բաժանմունքներում պարտադիր կերպով կրում են դիմակ և ձեռնոցներ՝ սահմանված հիգիենիկ կանոններին համապատասխան:
3. Դեղատան վարիչ Ն. Տերտերյանին, գլխավոր բուժքույր Թ.Հարությունյանին՝ ապահովել ՀԱՊԱԿ ստորաբաժանումների աշխատակիցներին դիմակների և ձեռնոցների անհրաժեշտ հաշվարկված քանակության տրամադրումը:
4. Գլխավոր բուժքույր Թ.Հարությունյանին՝ ապահովել անձնակազմին դիմակ և ձեռնոց կրելու, հանելու և պահպանելու հիգիենիկ պահանջների մասով ուսուցում:
5. Բաժանմունքների վարիչներին և ավագ բուժքույրերին՝ ապահովել անընդհատ և խիստ վերահսկողություն բաժանմունքների աշխատակիցների կողմից դիմակ և ձեռնոց կրելու պահանջի պատշաճ կատարման նկատմամբ:
6. Բաժանմունքների վարիչներին կամ բաժանմունքների ավագ բուժքույրերին՝ դիմակ և ձեռնոց կրելու պահանջի կատարումից հրաժարվող կամ ոչ պատշաճ կատարող կամ այլ

պատճառներով դիմակ և ձեռնոց չկրող աշխատակցի վերաբերյալ տնօրենին անհապաղ ներկայացնել զեկուցագիր՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարգապահական տույժի ենթարկելու նպատակով:

7. Հաստատել սույն հրամանի հավելված 1-ը՝ դիմակների և ձեռնոցների պահանջարկի օրական քանակները ըստ ՀԱՊԱԿ-ի ստորաբաժանումների:
8. Սույն հրամանի կատարման հսկողությունը ստանձնում եմ ինքս:
9. Սույն կարգը փակցնել ՀՀ ԱՆ «ՀԱՊԱԿ» ՓԲԸ բոլոր աշխատակիցների համար տեսանելի վայրում: Կարգն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրը՝ «28» մայիսի 2020թ.:

ՏՆՕՐԵՆ

ՍԵՐԳԵՅ ԽԱՉԱՏՐՅԱՆ